


## ՎԱՆԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ



## ԻՐԱՎԱԿԱԽԱՏՈՒՄ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՎՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում է իրավախախտման և իրավաբանական պատասխանատվության փոխկապակցվածության հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրները:

**Հիմնարարեր-** իրավախախտում, իրավաբանական պատասխանատվություն, իրավական կառուցակարգ, իրավունքի համակարգ, իրավահարաբերություն:

Իրավակիրառ պրակտիկայում իրավունքի գործման մեխանիզմը հաշվարկված է ոչ միայն հարթ, առանց կոնֆիլկտների աշխատանքի համար, այլ նաև այնպիսի իրավիճակների, երբ պահանջվում է «ուժային միջամտություն», որն առավել արդյունավետ իրականացվում է պետության կողմից: Այն դեպքում, եթե սուրբեկուները ունակ չեն ինքնուրույն իրականացնել իրենց պատկանող իրավունքները կամ կատարել սեփական պարտականությունները, նրանց օգնության է գալիս պետությունը՝ իրականացնելով իրավակիրառական գործունեություն: Սակայն պետության միջամտությունը անհրաժեշտ է նաև այն ժամանակ, եթե որևէ մեկը չի կատարում սեփական իրավաբանական պարտականությունները, խախտում է հաստատված իրավական արգելվները, ունենալու կատարում այլ անձանց իրավունքների նկատմամբ, այսինքն այն դեպքում, եթե իրավախախտում է կատարվում:

Ինչպես իրավունքի ընդհանուր տեսության այլ հարցերում, իրավախախտման հասկացության մենաբանությունը կախված է գիտնականի՝ այս կամ այն գիտական դպրոցին պատկանելությունից, նրա իրավաբնկալման տեսակից: Եթե մեկնարանի իրավունքը որպես ընդհանուր սոցիալական երևույթ (այլ ոչ միայն պետականորեն հաստատված), ապա նաև իրավախախտման երևույթի վերաբերյալ կարելի է խոսել ընդհանուր սոցիալական դրույթներից: Այս դեպքում իրավախախտման տակ անհրաժեշտ է հասկանալ սուրբեկութիւնը կողմից որևէ ցանկացած մեղսավոր խախտում (և համապատասխան իրավական պարտականությունների չկատարումը): Նման խախտումների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք ոչ միշտ են կապված նորմատիվ, ամրագրված սանկցիաների հետ և հաճախ չեն հանգեցնում կազմա-

կերպված փիզիկական հարկադրանքի միջոցների, սակայն ամենից առաջ ենթադրում են հոգեբանական ազդեցության և սոցիալական պաշտպանության միջոցներ: Սոցիալական իրավունքի առավել կառուցվածքային տարատեսակություններում (օրինակ, եկեղեցական իրավունքում) իրավախախտումների շրջանակը եզրագծված է բավականին խիստ և տարբերվում է պատմական հաստատված իրավախախտումների կազմից միայն սանկցիաների կիրառման գրունքացներով և բնույթով:

«Իրավախախտում» հասկացությունը իր առանձնահատկությունը ստանում է այն ժամանակ, եթե խորք է գնում իրավունքի պետական կազմակերպման վերաբերյալ: Թվում է, որ այստեղ առավել տեղին կլինի դրա ֆորմալ-իրավաբանական սահմանումը: Նման դիրքորոշումից իրավախախտում, բոլոր մնացյալ ֆորմալ պայմանների դեպքում, կհանդիսանա ցանկացած արարք, որը կիսախտի օրենսդրություն հաստատված արգելը:

Իրավաբանական պատասխանատվության ազդեցությունը արտահայտվում է ոչ դրա կոշտությամբ կամ խստությամբ, այլ անխուսափելիությամբ: Անխուսափելիության սկզբունքը օրենսդրության մեջ ամրագրված հիմնարար գաղափար է, որը ամփոփվում է հասարակական վտանգավոր արարքների համար իրավաբանական պատասխանատվության պարտադիր հաստատման, իրավական կարգադրությունների պարտադիր պահպանման և իրավախախտման նկատմամբ դատապարտման, արդարացի, մարդասիրական, անհատականացված իրավական պատասխանատվության միջոցների կիրառությամբ պետության լիազորված մարմինների պարտադիր ռեակցիայի մեջ:

Ցանկացած իրավախախտում պետք է հանգեցնի պետության կողմից համապատասխան արձագանքի: Այդ արձագանքը արտահայտվում է

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավախախտի անխուսափելի պատժի և խախտված հասարակական հարաբերությունների վերականգնման մեջ: Պատիժը, որպես անխուսափելի արձագանք, իրականացվում է ոչ թե իր համար, այլ անխուսափելիության այլ ասպեկտի համար, որպեսզի սուբյեկտը ապագայում չխախտի իր վրա դրված պարտականությունները: Դա նաև նպաստում է պատիժի և վերականգնողական գործառույթների հետ դաստիարակչական և մասնակի կանխարգելիչ գործառույթների իրականացմանը, քանի որ միայն պատիժը չի կարող ապահովել իրավաբանական պատասխանատվության անխուսափելիությունը:

Դժբախտաբար, ժամանակակից իրականությունը վկայում է անխուսափելիության սկզբունքի հաճախակի խախտումների, իսկ համապատասխանաբար նաև իրավական պատասխանատվության դիմունկցիաների արտահայտման վերաբերյալ: Ըստ անվանի քրեագետների վկայության հանցագործությունների բացահայտման բարձր մակարդակը վկայում է լատենտ հանցագործության բարձր մակարդակի վերաբերյալ<sup>1</sup>:

Իրավաբանական պատասխանատվությունը չի հանգեցվում և լուծվում «պարտականություն», «իրավաչափ վարքագիծ», «խախտուսում», «պարտականությունների նկատմամբ կամային վերաբերմունք» հասկացություններին:

**Առաջին.** իրավաբանական պատասխանատվությունը՝ պատշաճ կամ պահանջվող վարքագիծ ձև և չափորոշիչ է: Պարտականության հիմքում տեղակայված է իրավաբանական ամրագրված անհրաժեշտությունը: Մեկ պարտականությունը չի կարող բնութագրել ամբողջ պատասխանատվությունը: Այն չի կարող իրականացվել առանց իր հիմքի՝ իրավական նորմի: Պատշաճ կերպով (իրավաչափ) գործելու պարտականությունը իր վիճակագրությամբ ապագա վարքագծային մողելների ձևով բնութագրում է պատասխանատու վարքագիծը և իրավաբանական պատասխանատվությունը, սակայն չի հանգեցվում վերջիններիս: Իրավաբանական նորմը հանդիսանում է իրավաբանական պատասխանատվության հիմքը:

**Երկրորդ.** իրավաբանական պարտականությունը, ինչպես նաև ամբողջ իրավունքը, ամենից առաջ, հաշվարկված է գիտակցված և կամային վարքագիծի համար: Անձի՝ որպես պատասխանատու և իրավաչափ գործողությունների սուբյեկտի գնահատման համար անհրաժեշտ է պարտականությունների գիտակցում և դրանց նկատմամբ կամային վերաբերմունք: Այս գիտակցվածությունը արտահայտվում է դրական հոգեբանական վերա-

բերմունքի միջոցով, սակայն չի հանգեցվում վերջինին, քանի որ դրական վերաբերմունքը պետք է արտահայտվի իրական իրավաչափ վարքագիծի մեջ: Պարտի, պատասխանատվության զգացողությունը, դրական հոգեբանական վերաբերմունքը չի հանդիսանում պատասխանատվություն: Դա իրավաչափի և պատասխանատու վարքագիծի սուբյեկտիվ կողմն է: Սուբյեկտիվ կողմը չի կարող գոյություն ունենալ առանց իր օրյեկտիվ հիմքի, իրավաբանական պատասխանատվության կայուն արտահայտման:

**Երրորդ.** իրավաբանական պատասխանատվությունը նույնական չէ պարտականությունների հետ, քանի որ պարտականությունը իրականացվում է գիտակցված, կամային, իրավաչափ վարքագծում՝ պատասխանատվության արտաքին արտահայտման մեջ: Կամավոր պատասխանատվության դիմամիկան սկզբում է իրավաբանական պատասխանատվության իրականացման պահից:

**Չորրորդ.** իրավահարաբերությունները, որոնց մասնակից հանդիսանում է պատասխանատու սուբյեկտը, ծագում և գործում են իրավական նորմի հիման վրա: Իրավաչափ վարքագիծը իրականացվում է կարգավորվող իրավահարաբերությունների շրջանակներում: Ինչպես ցանկացած իրավահարաբերության մեջ, սուբյեկտի պարտականություններին անհուսափել ուղեկցում է համապատասխան իրավունքը: Իրավահարաբերության սուբյեկտի պարտականությունը ապահովվում և երաշխավորվում է պետության կողմից: Որոշակի գործողությունների կատարման կամ դրանցից ձեռնպահ մնալու անհրաժեշտությունը ապահովվում է համոզմամբ, հարկադրությամբ և խրախուսամման:

**Հինգերորդ.** իրավական արմեքավոր իրավաչափ արարքների գնահատականը հանդիսանում է իրավաբանական պատասխանատվության գործադրման և դիմամիկայի զարգացման արդյունք: Հնարավոր է նման գնահատականի երեք տարրերակ. պետության կողմից լրեճայն հավանություն (չկա անհրաժեշտություն ուղեկցիա տալ ցանկացած իրավաչափ արարքի վերաբերյալ), համապատասխան ստուգման իրականացում և որպես արդյունք՝ ընթացակարգային որոշում, որը հաստատում է իրավաչափ որոշման փաստը (օրինակ, ամենի գործողությունների անհրաժեշտ պաշտպանությունը, խիստ անհրաժեշտությանը, հիմնավորված ուղևոկին, ֆիզիկական հարկադրությանը համապատասխանող ընդունումը), խրախուսամման:

Պատասխանատվության գնահատման երկրորդ և երրորդ տարրերակները իրականացվում են ընթացակարգային ձևով:

Իրավաբանական պատասխանատվությունը

իրավահարաբերությունների մասնակիցների կողմից իրավական կարգադրագրերի օբյեկտիվորոշումներն ապահովության մասնակիցների օրենքով հաստատված և պետության կողմից պաշտպանվող պահպանության պարտականությունն (անհրաժեշտությունն) է, իսկ դրանց խախտման դեպքում՝ իրավախախտի դատապարտում, նյութական կամ անձնական ոչ նյութական բնույթի իրավունքների սահմանափակման կրելու պարտականությունը։ Իրավաբանական պատասխանատվության մեջ նորմատիվորեն ամրագրված է իրավաբանական պատասխանատվության իրականացնան ինչպես պողիտիվ, այնպես նեզատիվ ասպեկտները։

Հստ մեր տեսակետի՝ հատկապես հարցի նման առաջադրումն է համապատասխանում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումների ժամանակակից պահանջներին, քանի որ պողիտիվ պատասխանատվությունը առանց իրավունքի նորմերում նեզատիվ պատասխանատվության ամրագրման անպաշտպան է, իսկ նեզատիվ պատասխանատվությունը առանց պողիտիվի՝ անհմաստ։ Իրավաբանական պատասխանատվությունը՝ որպես ամբողջական իրավաբանական երևոյթ, իրականացնում է կարգավորիչ-ստատիկ գործառույթ, հանդիսանում ամենից առաջ իրավունքի նորմերում շարադրված պատասխանատու և պատշաճ վարքագծի նմուշ, ինչին նաև կողմնորոշում են իրավունքի սուբյեկտներին, և որի պատճառով հանդիսանում է բազային։ Իրավաբանական պատասխանատվության սահմանման մեջ ընդգրկել ենք նաև նեզատիվ ասպեկտը, սակայն դա չի նշանակում, որ այն միշտ է իրականացվում։ Սակայն այն անհրաժեշտ է, քանի որ ցուցում է սուբյեկտին, թե ինչ անքարենպաստ հետևանքներ կիսաստատիվն նրա համար իրավունքի նորմի խախտման դեպքում։ Միանմություն է կարծել, որ հասարակական հարաբերությունների բոլոր սուբյեկտները կպահպանեն իրավունքի նորմերը միայն օրենքի նկատմամբ հարգանքից մղվելով։ Այդ իսկ պատճառով ևս մեկ անգամ ընդգծում ենք, որ պողիտիվ պատասխանատվությունը առանց նեզատիվի անպաշտպան է, ինչը չի նշանակում նեզատիվ պատասխանատվության պարտադիր իրականացում, քանի որ դրա իրականացումը հնարավոր է միայն անպատասխանատու վարքագծի (իրավախախտման) ակտի դեպքում, սակայն այս ասպեկտը տեղադրված է միասնական պատասխանատվության մեջ և, ազդելով հոգեբանական մակարդակում (կամքի և գիտակցության վրա), մասնակցում է իրավաբանական պատասխանատվության իրականացնան պողիտիվ ասպեկտի ապահովման մեջ։ Պատասխանատվու-

թյունը ազդեցիկ և արդյունավետ է միայն իր տարբեր ասպեկտների փոխադրության մեջ, որոնք ել իրենց համախմբում կազմում են որպես ամբողջական իրավական երևոյթ պատասխանատվության հակացությունը։

Իրավաբանական պատասխանատվությունը որպես ամբողջական իրավական երևոյթ, հանդիսանում է անձի իրավական դրության երաշխիք և էական կողմը։ Այլ երաշխիքների հետ զուգահեռ այն կողմնորոշված է իրավունքներից և ազատություններից օգտվելու իրական հնարավորությունների ստեղծմանը։ Այլ խոսքերով, իրավաբանական պատասխանատվությունը կողմնորոշված է նրան, որ քաղաքացիների կողմից իրավունքների և ազատությունների կիրառությունը անբաժանելի է իրենց պարտականությունների կատարումից և չպետք է վնասի անհատի, հասարակության և պետության շահերը։

Իրավական պետությունը, որի կառուցումը Հայաստանի Հանրապետության համար հանդիսանում է հիմնական նպատակներից մեկը, ենթադրում է մարդու և քաղաքացու համար ազատության առավելագույն աստիճանը և սահմանում «քոյլատրվում է ամենը, ինչ արգելված չէ օրենքով» սկզբունքը։ Հատկապես նման հասարակության մեջ, որպես հասարակական կյանքի կարգավորիչ, իրավունքը ստանձնում է ոչ այնքան հասարակական հարաբերությունների պաշտպանության, որքան կարգավորման գործառույթները, իսկ իրավաբանական պատասխանատվությունը արտահայտվում է ամենից առաջ հասարակական հարաբերությունների մասնակիցների՝ իրենց պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքում և առկա իրավունքների ու ստանձնած պարտականությունների բարեկարգ իրականացման մեջ։

Որոշ հեղինակներ պատասխանատվությունը, սահմանում են որպես համակարգ։

Նման իրավիճակում ակնհայտ է դառնում, որ իրավաբանական պատասխանատվության համակարգը իրավունքի նորմերի և ինստիտուտների համախումք է, որոնց պահպանումը ապահովում է իրավակարգը, իսկ իրավախախտումների դեպքում դրանց կիրառությունը վերականգնում է իրավակարգը։ Դրա հետ կապված իրավաբանական պատասխանատվությունը անհրաժեշտ է տարբերակել անձի կողմից իր պարտականությունների հարկադրական կատարումից, որտեղ հարկադրությունը հանդես է գալիս որպես իրավունքի պաշտպանության միջոց։

Կարևոր է նշել, որ իրավական նորմերով ձևավորված հասարակական ռեակցիան պետք է

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նախատեսի իրավաբանական պատասխանատվության տվյալ տեսակի նյութական-իրավական և դատավարական ասպեկտին հարաբերություն ունեցող բոլոր էական հարցերի կարգավորումը: Բացի դրանից, օրենսդրի կամքի արտահայտումը պետք է ձևակերպվի և շարադրվի որոշակիության բավարար աստիճանով՝ բացառելով երկակի մեկնարանությունը:

Իրավական նորմերի մեկնարանությամբ բոլոր խնդիրները չեն լուծվում, առավել ևս միասնական իրավական հունում: Յուրաքանչյուր իրավակիրառող ունի իր տեսանկյունները:

Իրավաբանական պատասխանատվության իրավախախտի ենթարկման իրավական կարգավորման համայիր բնույթը էական աստիճանով կախված է ծագող իրավահարաբերությունների առանձնահատկություններից: Բանը նրանում է, որ իրավաբանական պատասխանատվության իրավախախտի ենթարկման ցանկությունը չի կարող կրել բացարձակ բնույթը: Պատասխանատվության պետք է ենթարկվի միայն մեղավոր անձը (բացառությամբ քաղաքացիական իրավաբանական պատասխանատվության որոշ դեպքերի): Այդ իսկ պատճառով խնդիրը կայանում է նրանում, որ բացառվի իրավաբանական պատասխանատվության անհիմն ենթարկումը: Իրավաբանական պատասխանատվության ենթարկման հիմնավորվածության հասկացությունները ունեն մի քանի շափումներ:

Այսպես, իրավաբանական պատասխանատվության նյութական-իրավական ասպեկտում պարտադիր է պահանջի պահպանությունը, որ իրավաբանական պատասխանատվության ենթարկող անձը պետք է իմանա, թե ինչ իրավախախտման վերաբերյալ է խոսք գնում, ինչպես նաև նրա վերաբերյալ, որ իրավաբանական պատասխանատվության միջոցները պետք է իրավախախտմանը համարժեք լինեն: Նման գնահատականը հեշտ է տալ քաղաքացիական-իրավական և նյութական իրավաբանական պատասխանատվության նկատմամբ, քանի որ, ըստ էության, խոսք է գնում խախտված նյութական իրավունքների վերականգնման վերաբերյալ: Բարոյական վնասի նկատմամբ դա բարդ է իրականացնել: Ինչ վերաբերվում է կարգապահական, վարչական և քրեական իրավաբանական պատասխանատվությանը, ապա այստեղ նման տեսակի կողմնորոշիչները բացակայում են. այդ իսկ պատճառով սոցիալական արդարության վերականգնման, կատարվածի փոխառության համար պահանջվում են իրավախախտի վրա ազդեցության այլ եղանակներ: Ընդ որում, նման ազդեցության փոփոխման շափորոշ-

իչները իրավաբանական պատասխանատվության յուրաքանչյուր նշված երեք ռեպրեսիվ տարրերակներում միանման չեն, քանի որ համապատասխան իրավախախտումները տարրերվում են հակաիրավական գործողությունների (անգործության) բնույթով և դրանց վտանգավորության աստիճանով: Շատ կարևոր է բացառել կրկնակի կամ կրկնվող պատասխանատվության փաստերը ոու bis in idem, սկզբունքին համաձայն: Կարևոր է, որ իրավաբանական պատասխանատվությունը հասարակության կողմից ընդունվի եթե ոչ հավանությամբ, թեկուզ գիտակցաբար:

Ենեկով բերված փաստարկներից՝ կարելի է կատարել եղանակացություն, ըստ որի՝ իրավաբանական պատասխանատվության անձի ենթարկման փաստը չի հանդիսանում հասարակության ռեակցիա բառիս բուն ինաստով: Նույնիսկ եթե խոսք է գնում վարչական կամ քրեական պատասխանատվության վերաբերյալ, առկա է կոնկրետ իրավախախտման նկատմամբ պետական իշխանության մարմինների արձագանքը: Առավել ևս հասարակության արձագանքի վերաբերյալ չի կարելի խոսել պատասխանատվության կարգապահական և նյութական (սահմանափակման) տեսակները նախատեսող նորմերի կիրառության դեպքում:

Ծարադրվածի հաշվառմամբ կարծում ենք, որ իրավաբանական պատասխանատվությունը իրենից ներկայացնում է նյութական և դատավարական նորմերով ձևակերպված ըստ հանրային շահերի պաշտպանության հասարակության հատուկ իրավական ռեակցիան՝ իրավախախտին իր համար անբարենպաստ հետևանքների կրման նպատակներով (որպես տարրերակներ՝ իրավախախտին անբարենպաստ հետևանքների կրմանը հանգեցման նպատակներով): Անկասկած, կոնկրետ դեպքում տեղի է ունենում նաև մասնավոր շահերի պաշտպանություն: Սակայն իրավական պաշտպանության իրավական մեխանիզմում մասնավոր շահերը անդեմանում են: Միևնույն ժամանակ տեղի է ունենում դրանց միավորում հանրային շահերի հետ:

Տվյալ սահմանումը էական աստիճանով է համապատասխանում համապարփակության պահանջներին: Այն ընդգծում է իրավաբանական պատասխանատվության ինստիտուցիոնալությունը, չի բացառում ինչպես մեղավորի՝ պատասխանատվության ենթարկման, այնպես նաև անմերի արդարացման հնարավորությունները: Միևնույն ժամանակ չեն բացառվում վնասի պատճառման համար մեղավորության բացակայության դեպքում քաղաքացիական-իրավական պատասխանատվության ենթարկման դեպքերը:

Իրավաբանական պատասխանատվության նման ընկալումը ենթադրում է իրավախախտի վրա ազդեցության բոլոր առկա եղանակները, ինչպես վերականգնողականը կամ փոխհատուցումայինը, այնպես նաև պատժիշր կամ ռեաքտսիվայինը: Բացի դրանից, նման մոտեցումը չի բացառում անհրաժեշտ դեպքերում պետական հարկադրանքի կիրառում: Եվս մեկ դրական կողմը կայանում է նրանում, որ բերված սահմանումը համաձայնեցվում է իրավունքի ընդիհանուր տեսության հետ և հնարավորություն ընձեռնում հաշվի առնել իրավաբանական պատասխանատվության բոլոր տեսակների առանձնահատկությունները:

Սեղանում իրավական պետության կայացման ժամանակակից փուլում իրավաբանական պատասխանատվության էության ընկալումը հատկապես կարևոր է քաղաքական, տնտեսական և իրավական բարեփոխումների իրականացման համար: Այն կարդարացնի հասարակական սպասումները, եթե համապատասխանի ընդիհանուր ընդունված օրինականության, արդարության և անխուսափելիության սկզբունքներին: Չնայած հակահրավական գործողությունների կատարման ամբողջ պայմանների, պատճառների և դրդիչների բազմաձևությանը, դրանք բոլորը օժտված են ընդիհանուր հատկանիշներով, ինչն էլ հնարավորություն է տալիս ֆորմալ բնութագրել դրանց որպես իրավախախտումներ:

1. Բոլոր իրավախախտումները իրենցից ներկայացնում են մարդկանց արարքներ: Դա նշանակում է, որ հակահրավական վարքագիծը միշտ արտահայտվում է իրենցից գործողություն կամ անգործություն ներկայացնող արտաքին արարքներում: Մարդկային գիտակցության, մտքի, էմոցիաների, ապրումների ներքին ակտերը, եթե դեռ չեն փոխանցվել արտաքին արարքների, չեն ստացել հաղորդակցական նշանակություն, չեն կարող գերակայող իրավագիտակցությանը համապատասխան ձևավորել իրավախախտման կազմը:

2. Մարդու արարքը միայն այն ժամանակ է ստանում իրավախախտման նշանակություն, եթե այն, խախտելով իրավական հաղորդակցությունը, ծնում է բացասական պատասխան ռեակցիա պետության և հասարակության կողմից:

Իրավական հաղորդակցությունները գործում են կոնտինուալ (անխօնելիության) սկզբունքին համապատասխան: Դա նշանակում է, որ իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքները և պարտականությունները չպետք է ընդիհատվեն իրավական հաղորդակցության մասնակիցների կամքին դեմ: Սոցիալ-հոգեբանական իմաստով նման արարքը մեկնարանվում է որպես իրավա-

կական վտանգավոր արարք, որին անհրաժեշտ է սոցիալական հակադրություն: Արարքի հասարակական վտանգավորության հասկացությունը ենթադրում է անձնական կամ հասարակական շահերին վնասի պատճառում և դրա սոցիալական գնահատականը: Ինչպես հաղորդակցական-իրավական հարաբերությունները հասարակության կողմից ընդունվում են պողիտիվ արժեքի, բարության ձևի որակով, այդպես էլ դրանց խախտումը գնահատվում է որպես վնասի պատճառում, այսինքն՝ որպես այն, ինչին անհրաժեշտ է խոչընդոտել, իսկ որոշակի դեպքերում՝ պատշաճ ձևով հատուցել կատարածի համար:

3. Հատկապես հասարակական վտանգավոր արարքները արգելվում են իրավական նորմերով, որոնք յուրաքանչյուրին պարտավորեցնում են չխախտել այն, ինչը վնաս է պատճառում հասարակությանը և նրա առանձին անդամներին: Այդ իսկ պատճառով հաստատված իրավական ասպեկտը խախտող (իր վրա դրված իրավական պարտականությունը չկատարող) սուբյեկտը կատարում է հակահրավական արարք:

4. Սակայն յուրաքանչյուր հակահրավական արարք իրավախախտում չէ: Անհրաժեշտ է, որպեսզի այդ արարքը հանդիսանա կոնկրետ սուբյեկտի ազատ կամային արարք, այսինքն՝ որպեսզի անձը գիտակցի, որ իր արարքը հակահրավական է և կիանգեցնի բացասական հետևանքների, և բոլոր դեպքերում այն կատարել է: Այլ խոչընդոտվ, անհրաժեշտ է, որ արարքի սուբյեկտը մեղավոր ընդունվի:

Մեղավորությունը և մեղսագրումը հանդիսանում են ոչ միայն իրավաբանական, այլ նաև փիլիսոփայական բարդ հասկացություններ:

Մեղսագիտակցությունը (մեղսունակությունը) պատասխանատվության անքակտելի տարրն է և դրա հետ հանդիսանում է իրավական հաղորդակցության անհրաժեշտ տարր: Խախտել իրավական արգելանքը կարող է միայն սուբյեկտը, ով հասկանում է իրանակացվող գործողությունների իմաստը և դեկավարում իր վարքագիծը:

Բանը նրանում է, որ որևէ մեկին իր պարտականությունների կատարման պարտավորեցումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե սուբյեկտը ունակ է գործել նորմատիվ պահանջներին համապատասխան: Նման ունակությունը կապված է մարդու՝ իր ձևավորման բնականոն պայմանների դեպքում որոշակի տարիքում հաստատվող ինտելեկտուալ-հոգեբանական որոշակի վիճակի հետ: Իրավախախտի պարտականություններից մեկը կրելն է այն անբարենպատ հետևանքները, որոնք սահմանված են իրավական նորմի սանկցիայով:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կատարված արարքի համար իրավաբանական պատասխանատվությունը կրելու նման ունակությունը անվանվում է մեղսունակություն:

Մեղսունակությունը հանդիսանում է մեղքի ծագման նախադրյալ, քանի որ անգործունակ մարդը չի կարող հանդիսանալ նաև մեղավոր: Մեղքը կարելի է սահմանել դրանք անձի անզգուշավորության կամ դիտավորության ձևով կատարածի նկատմամբ հոգեբանական վերաբերմունք:

Իրավախախտման կազմը ընկած է իրավախախտման հիմքում: Իրավախախտման կազմի տակ ընկալվում է իրավախախտուների առանձին տարատեսակությունների առավել ընդհանուր և էական հատկանիշների համակարգը: Առանց նման հատկանիշների առկայության հնարավոր չէ

անձին իրավաբանական պատասխանատվության ենթարկել: Իրավախախտման կազմության մեջ ընդգրկվում են հետևյալ տարրերը. իրավախախտման սուբյեկտ, իրավախախտման սուբյեկտիվ կողմ, իրավախախտման օբյեկտ, իրավախախտման օբյեկտիվ կողմ:

Իրավախախտման կազմը (փաստացի կողմը) և իրավական նորմը (նորմատիվ կողմը) հանդիսանում են իրավաբանական պատասխանատվության հիմքերը:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Կուդրյավցև Վ.Ն. Սtrategiya борьбы с преступностью. М., 2003.

<sup>2</sup> Տե՛ս Լիպинский Դ.А., Խաչատրով Ռ.Լ., Շիշկин Ա.Գ. Меры юридической ответственности. М., 2014, С. 162- 163.

Վանին Օվսեպյան

Соискатель института философии, социологии и права  
Национальной Академии Наук Республики Армения

### РЕЗЮМЕ

#### *Правонарушение и юридическая ответственность*

В данной статье рассматриваются теоретические и практические проблемные аспекты правонарушения и юридической ответственности.

**Ключевые слова:** правонарушение, юридическая ответственность, правовой механизм, система права, правоотношение.

Vanine Hovsepyan

Applicant of the Philosophy, Sociology and Law Institute  
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

### SUMMARY

#### *Offense and Legal Liability*

The theoretical and practical problems connected with the interrelation of offense and legal liability are thoroughly discussed in the present article.

**Keywords:** offense, legal liability, legal mechanism, systems of law, legal relationship.